

բակագիտական դատողութիւնների մէջ։ Վերջապէս՝ չը ոք Արծըւրունին համայնական չէր, այլ թունդ անհատական։

Յարութիւն Եսայեան. «Կենքի ԹօՄԱՆԻՑ», վեպիկ. 147 էլ. գ. 25 կ.
Թիֆլիս, 1903:

Զը կայ և չի կարող լինել ամենագէտ մարդ, բայց ամեն գրականգէտից կարելի է և պէտք է պահանջել, որ շատ աւելի բան իմանայ, քան միջին ընթերցողը, և, որ գլխաւորն է, իմանայ, թէ ինչը ինչ գիտի և ինչ չը գիտի։

Դժուար է երևակայել աւելի վնասակար երևոյթ, քան այն, որ «չարի և բարւոյ գիտութեանց ծառից չը ճաշակած և կեանքի ու նրա օրէնքների մասին ամենամիամիտ հայեացքներ ունեցող անհատներ, մի տեսակ չարաբաստիկ գրելացաւով բըռնուած, քարոզչի և ժողովրդական ուսուցչի դեր ստանձնելով, կրքեր ևն տպում ամենատարբեր բովանդակութեամբ, լինեն դրանք ուսանաւորներ, վէպեր, թէ հրապարակախօսական գլուխածքներ։

Այդ է պատճառը, որ, մեր կարծիքով, քննադատը, ինչքան էլ համակրութեամբ կամ ցաւակցութեամբ վերաբերուի խակ, անզրագէտ կամ տգէտ գրուածքների հեղինակների անձնաւորութեանը, այնուամենայնիւ պարտական է ամենախիստ կերպով հարուածել այդ գրուածքները, որովհետև գրականութիւնը ժողովրդի յառաջադիմութեան ամենազօրեղ գործօնն է և այդ յառաջադիմութեան ամենալաւ ցուցարարը։

Մինչեւ լուրջ գրականութիւն չ'ունենանք, լուրջ ազգ չենք լինի։

Գոնէ ինձ վրայ ամեն մի հայ գիրք, որի հեղինակը գեռ կարիք ունի զարգացումը շարունակելու, այնպիսի տպաւորութիւն է գործում, ինչպէս մի ապտակ՝ հասցրած ամբողջ հայ ազգի, ուրեմն և ամեն մի հայի ինքնասիրութեանը։

Դրանով է բացատրւում իմ քննադատութիւնների խիստ ոճը, որ այնքան զայրացնում է հեղինակներից շատերին և այնքան անձնական թշնամիներ է ստեղծում ինձ համար։

Բայց բաւական է խօսել pro domo sua: Անցնենք պ. Եսայեանի վկավիկին։

Գրիշան համալսարանը նոր աւարտած փաստաբան է. Սերենժան թերուս հաշւապահ, Գրիշան իդէալիստ է. Սերենժան ասլրում է միմիքայն կեանք վայելելու համար, իդէալիստնե-

րին համարում է տիմմար արարածներ և նոյնիսկ յանցանքի առաջ կանգ չի առնում որքան կարելի է շատ զուարձութիւններ ստանալու համար։ Մի խօսքով՝ Գրիշան հրեշտակների հրեշտակն է, իսկ Սերեոփան սատանաների սատանան։

Վէպիկի մէջ կան նաև ուրիշ հրեշտակներ—Գրիշայի ընկերները և օրիորդ Համասփիւար, և ուրիշ սատանաներ—Սերեոփայի ընկերներն ու ընկերուհիները, և միմիայն մի մարդ, մի կենդանի մարդ—մացիքուլ Կէկէլը։

Գրիշան և Սերեոփան սիրահարուած են Համառփիւոի վրայ, Գրիշան՝ մաքուր սիրով, Սերեոփան՝ վաւաշոտ կրօնով։ Սերեոփան ամեն միջոց գործ է դնում Համասփիւոի սիրոը գրաւելու և նրան Գրիշայից սառեցնելու, բայց չի յաջողում։ Սակայն պատահմունքը օգնում է նրան, նա հանդիպում է Համասփիւոին ամարահարուած միջով և սկսում է բացատրել իր սէրը և յփորել նրան, որ ըստ մերժի իրանու Գրիշան յանկարծ վրայ է հասնում այդ ժամանակ և կիսատ-պոատ խօսքերից այն համոզմունքը կազմելով՝ թէ Համասփիւոը դաւաճանել է իրան, թողնում հեռանում է։ Սակայն թիւրիմացութիւնը վերջիվերջոյ պարզում է, և նրանք ամուսնում են։ Մինչ այդ, Սերեոփան, որ մի աշակերտունու խարելուց յետոյ փախել էր Կ...քաղաքը, սկսում է զղալ «Նեխիլիւդովի նման»։ «Եւ երբ Գէորգուց (իր ընկերից) ստացաւ մի նամակ, որի մէջ նկարագրում էր օրիորդ Փնջիկեանի (իր խարած օրիորդի) եղերական մահը, ապա Սիրունեանի (օր. Համասփիւոի) մտատանջութիւնից տըկարանան ու մաշուելը, Գրիշայի անտարերութիւնը դէպի վերջինս՝ իբրև գաւաճանի, նա համարեա վայրկենապէս փոփոխուեց» (ուզում է ասել՝ փոխուեց, որովհետեւ մի անգամ չի կարելի «փոփոխուել»)։

Նա մի նամակ է գրում Գրիշային և բացատրում է, որ նրա, Գրիշայի, դգոհութիւնը օր. Համասփիւոից միմիայն թիւրիմացութեան արդիւնք է, որովհետեւ օրիորդը երբէք չի դաւաճանել նրան։

Գրիշայի և Համասփիւոի հարսանիքի ժամանակ յանկարծ ներս է մտնում Սերեոփան, խելագարի նման նայում է շուրջը, ասում է՝ «Այժմ հանդիսաւ եմ, որ նրանք հասան իրանց նպատակին, իսկ ես մարդ չեմ, այլ մարդկութեան բեռ, մարդիկ ինձ ջնջել են իրանց ցուցակից և տեղի է», ու վազում է իրան գըցում գեար։

Կան մարդիկ, որոնք իրանց գցում են զետը։ Այդ անբնական չէ, բայց և հազւագիւտ է։ Այդ քայլն անում են միմիայն որոշ բնաւորութեան տէր մարդիկ և միմիայն որոշ հանգամանք-

Ներում: Սերենժան, որքան կարելի է գաղափար կազմել պ. Եսայեանի դժգուն Նկարագրութիւնից, այդ բնաւորութիւններից չէ: Վերջապէս, հանգամանքներն էլ այնպէս չեն դասաւորուած, որ այդ եղերական դէպքը անհրաժեշտ լինէր:

Եթէ Սերենժան խեղդւում է զգչման ազդեցութեան տակ, շատ ուշ է խեղդւում: Խղճի խայթոցները չեն կարող իրանց դագաթնակէտին համել այն բովէին, երբ մարդ համոզւում է, որ իր արած չարիքը հէնց իր չորո՞հու չքացել է, իր քանդածը ինքըն էլ շինել է: Եթէ նա խեղդւում է չը կարողանալով տանել այն բանը, որ Գրիշան պսակւում է Համասփիւսի հետ, կը նըշանակի նա խորապէս սիրում է Համասփիւսին, մինչդեռ նա զգում էր դէպի նա միմիայն փիզիկական կիրք, որին շատ հեշտութեամբ էր յագուրդ տալիս ուրիշների հետ:

Պարզ է, որ հեղինակը չի իմացել, ինչպէս զլիսից ուղ անի այդ հերոսին, և դիմել է հեշտ միջոցի, սպանութեան: Անյաջողակ հեղինակների համար դա ամենահեշտ միջոցն է իրանց զրուածքին վերջ տալու:

Պ. Եսայեանի ամբողջ մէսփիկը, բացի մի քանի էջից, ուրուց մասին կը խօսեմ վերջում, լիքն է այդպիսի հոգեբանական սխալներով:

Օր. Համասփիւոր ուզում է տեսնել Գրիշային, բացատրել ուրան, որ ինքը անմեղ է, բայց չը գիտէ ինչպէս տեսնուի նրա հետ: Նրանց տունը գնալ վախենում է, որովհետեւ Գրիշայի մայրը իր դէմ է: Սյդպէս նա ամիսներով հալումաշ է լինում միակ յոյսը դնելով այն բանի վրայ, որ մի տեղ կը պատահի Գրիշայի հետ: «Նա գալով թիփլիս՝ շատ աշխատեց, որ Գրիզորին պատահէ մի որեէտ տեղում, խօսէ նրա հետ, պարզէ ամեն ինչ, բայց չէր յաջողւում»:

Խեղճ աղջիկը քիչ է մնում բարակացաւ ընկնի, և հեղինակի մաքովն անգամ չի անցնում, որ Համասփիւոր՝ գրագէտ լինելով՝ շատ հեշտութեամբ կարող էր նամակով գրել իր ուզածը կամ դոնէ մի երկտողով տեսակցութիւն խնդրել Գրիշայից:

Գեղարուեստագէտ հեղինակը, — այնպիսի հեղինակ, որի երեակայութեան մէջ իրօք ապրում են իր հերոսների պատկերները, — չէր կարող աչքաթող անել այլպիսի մի հանգամանք:

Վերցնենք մի ուրիշ օրինակ: Սերենժայի տանը ընթրիք է:

«Արդէն ժամի $3\frac{1}{2}$ -ն էր, շուտով կը լուսանար. Սաշան շտապեց զոյելու ինձոյքը»... Հիւրերը «ցրուեցան և ամեն ոք կատարեալ հարբած էիս զիշերին բաղիսեց իր դուռը»...

Պարզ է, որ հեղինակը վերջին տողերը գրելիս՝ մոռացել է առաջին տողերի մասին, իսկ այդ անհնար կը լինէր, եթէ

նրա երեակայութեան մէջ լինէր իր նկարագրած ընթրիքի պատկերը:

Ի դէպ այդ ընթրիքի մասին:

Պ. Եսայեանը կարծում է, թէ կարելի է նկարագրել ամենինչ, որ կատարւում է կեանքում, ուստի և աւելորդ է համարում թղենու տերեների զոյսութիւնը և տեղ-տեղ հասնում է պոռնը-կագիրների անկեղծութեան: Մի անգամ ևս արդէն առիթ եմ ունեցել մատնացոյց անելու երիտասարդ հեղինակի այդ առանձնայատկութիւնը: Յիշենք և այս: Հեղինակը հարկաւոր է համարում ամենայն մանրամասնութեամբ նկարագրել և վերարտադրել Սերեոժայի լիրք հիւրերի լկտի կատակները: Նա մեզ պատմում է, որ Սերեոժան և ընկերները ընթրիքի ժամանակ օկխառում էին: Օրիորդներին: Այսուհետև խօսք է ընկնում Գրիշայի և նրա նման իդէալիստների մասին:

«—Նրա նման իդէալիստներ շատ ենք տեսել, ասաց օրիորդներից մէկը:

—Հապա Համասփիւոը, նրա սիրուհին, եղբայր, որտեղից էլ գտաւ նա էդ հրեշտակին, ափսոս աղջիկ, ևս նրա էն էն... հոգուն մատաղ, ասաց Հրանոյշի միւս կողմում նստած տղան:

—Նրա ծծերն ուտեմ, հ'ը, ասաց Սիսակը:

—Ես էլ թշերն ուտեմ, ասաց Գատչօն:

—Պա, պա, ապրանք է, հա, ամբողջ Թիֆլիսում չի գըտնուի նրա նմանը, շրթունքները սեղմելով աւելացրեց մի ուրիշը»:

«—Տօ, թողէք էդ սարսադներին: Նրանք համարան են աւարտում, սարսադութիւն են սովորում ու եդ գալիս: Նրանք ինչ գիտեն, ինչ է աշխարհը, ինչ է կեանքը, կամ ինչպէս պէտք է ապրել: Նրանք մեղ անամօթ մարդիկ են համարում, խօսեց Գէօրգին:

—Հա, ինչպէս չէ, նրանց հօրն օղորմի, ծոցը մի օրիորդ պառկեցրու, վեր թուաւ տեղից Սիսակը բարձրաձայն կոչելով, շան պէս կը զգզգեն նրան...: Հենց Գրիշան որ սիրահարուել է Համասփիւոի հետ, ինչի՞ խաթեր, ուզում է էն սիրուն թշերիցը պաշի ու...

—Օխայ, երանի նրան զրկողին, լսուեց միւս կողմից»:

Սյա բոլորը բաւական չէ, պ. Եսայեանի գրքոյկը լիքն է այնպիսի սիրաներով, որոնք ապացուցանում են, որ նա գեռ իրաւունք չունի հեղինակ լինելու:

Ահա մի քանի օրինակներ:

Մարդ ունենում է շատ հայեացքներ, բայց մի աշխարհայեցք, իսկ պ. Եսայեանն ստիպում է փաստաբան Գրիշային աւովիս, 1903:

սել. «Ուստամ ինձ ներշնչել է ծնողներից առարկեր աշխարհայեացքներ» (9 եր.):

Պ. Եսայեանը կարծում է, թէ համալսարան աւարտելիս էլ «ոսկէ մէդալ» են տալիս: Նրա Գրիշան «օսկէ մէդալով» էր աւարտել համալսարանը (13 եր.):

Պ. Եսայեանը գործ է ածում օտարազգի բառեր, որոնց իմաստը չի հասկանում, օր. տակտիկա («առաջ Գրիշան միապաղաղ տակտիկայով», 24 եր.), դիսօնանս («Միւաները իրանց դիսօնանս գոռոցներով ձայն պահեցին», 36 եր.), վալիկ («օրիորդը իր քնքոյց մասներով զարկում է զաշնամուրի վալիկներին», 72 եր.), սուբեկտիւ («Երա մէջ բարոյականութիւնն ու զդշումն մի կողմից, իսկ անբարոյականութիւնն ու սուբեկտիւ աշխարհայեաչքը միւս կողմից կոխու էին մղում իրար դէմ, շարունակ խայթելով Սերեսի սիրտը» 74 եր.), կօնտրաստ («Ազնիւ զգացմունքները բողոք էին բարձրացրել իրանց կօնտրաստ զգացմունքների դէմ», 97 եր.). տեմպերամենտ (100 եր.):

Սակայն պ. Եսայեանը չը գիտէ նոյնիսկ զուտ հայերէն բառերի իմաստը: Օրինակ. «Գրիշան, համոզուելով, որ Համատիւոր իրան դաւաճանել է, տանջւում է ամրող երկու ամիս: «Բայց, ասում է պ. Եսայեանը, նա կամաց-կամաց հիասթափուեց (?!): և ոկսեց գործել նախկին եռանգով ու զաղափարով»:

Ահա պ. Եսայեանի ոճի մի երկու նմուշ.

«Եյսպիսի դէպքերում շատ պարզ է միւս փաստաբանի և կողմնակիցների արամադրութիւնն ու որոգայթները դէպի Պարտիզեանը, որ անյողողող կերպով կուրծքը և զլուխը դէմ էր անում արդարութեան համար:»

«... երկինքը ծածկուած է թանձր ամպերով, թագնելով իրանց յետեռում լուսատու աստղերը»:

«Մտնողը երիտասարդ էր, նա հագել էր սկ բաճկոնակ, սկ անդրավարտիկ, սպիտակ գալուստիկ կապած, օսլայած կրծքով ու մանժէտներ հագած»:

«Օրիորդն իր գեղասեսիլ հայեացքը ձգեց երիտասարդի կը-րակու հայեացքին և այդ ժամանակ սիրոյ բողը, շանթը, խանդը և նետը փոխադարձարար խայթեցին միմիանց սրտերը»:

«Այն գիշերը, որ ինձ տեսար օրիորդ Համասփիւոփ հետ անտառում և կասկածեցիր նրան հաւատարմութեանը դէպի քեզ ու հեռացրիր նրան, որ և այժմ տանջւում է, պարզն ասում եմ այժմ, այլս չեմ կարող թագնել և կեղծել, խիզն խայթում է...»

Գրքոյկի մէջ պատահում են նաև տիրացուական դարձուածքներ, օրինակ՝ «բազում ջանքեր», «գործերով դժուարին (երիտասարդ)»:

Վերջացնելով յօդուածռ՝ պէտք է լիշեմ, որ VII գլուխը ամբողջապէս մի մխիթարական օազիս է կազմում այդ զրականական անապատի մէջ և յոյս է տալիս, որ ապագայում գուցէ զրելու ձիրք զարդանայ պ. Եսայեանի մէջ, եթէ նա առաջընթափառուի գրքեր տպելու մնավառութիւնից և լուրջ կերպով պատրաստուի գեղարուեստագէտի լուրջ կոչման համար:

Տ. Յ.

Bernard Stern: „JUNGTÜRKEN UND VERSCHWÖRER. Dis innere hage der Türkei unter Abdul Hamid II», 263 s.
Բերնարդ Շերն. «ԵՐԻՑԱՍՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ ԵՒ ԳԱԽԱԴԻՐՆԵՐԸ. ԹԻՒՐՔԻԱՅԻ ՆԵՐԸ ՔԻՆ ՊՐՈՊԻԼԻՆԸ ԱՐԴԱԿ ՀԱՄԻԴ Ա-Ի ԽՂԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ»:

Մահմեդական տարրը ևս դժգոհ է Թիւրքիայի ներկայ վիճակից. բայց այդ դժգոհութիւնը հայրենասիրութեան հետ է շաղախուած: Այդ դժգոհ հայրենասէրները յայտնի են «Երիտասարդ թիւրքեր» անունով:

Դրանց աշքում հայրենի երկիրն իր պետական կազմակերպութեամբ ներկայացնում էր մի անկազմ ու անկերպարան երկիր, հարստանարութեան ասպարէզ, պաշտօնական ու ոչ պաշտօնական յափշտակութիւնների ենթակայ: Ի՞նչ էին անում դրա հանդէպ երկրի կառավարիչները, իշխանաւորները, որոնք այդ նոր հոսանքին հակառակ սկսեցին իրանց անուանել «Ճերունի թիւրքեր»: Նրանք ոչ մահմեդական թիւրքահպատակներին դարձրել էին «ուայեա», Նրանց բալրովին կղզիացրել էին և այդպիսով առաջ բերել իրար կողք-կողքի ապլոդ, բայց թըշնամի ու խորթ տարրեր՝ մահմեդականներ ու «ուայեաներ»: Այս վերջիններս զուրկ էին քաղաքացիական շատ ու շատ իրաւունքներից, թէն կրում էին տնտեսական ամենածանր բեռք: Պետական այդ գործիչների նպատակն էր մուսէմների ձեռքով ճընշելով ուայեաններին՝ միշտ հպատակութեան մէջ պահել նրանց:

Իսկ «Երիտասարդ թիւրքեր» հիմնովին սխալ ու վեասակար էին համարում այդ ուղղութիւնը և դրա փոխարէն առաջարկում իրանց ծրագիրը, որի հիմքը հետևեալն է. — Օսմաննեան պետութիւնը բարեկարգել և վերակազմել այն ձևով, այնպիսի հիմունքներով, որ նրա բազմացեղ, բազմակրօն, տարբեր տար-